

ՀԱՅՔ

ՀԱՆԴԵՍ

ԱՂԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ. ՆԻՒ ԵՂՐԲ, ՓԵՏՐՈՒԱՐ 1, ԹԻՒ 3. ԱՄԵՐԻԿԱ ԹԻՒ 147

The Haik,

A Journal devoted to Armenia, Armenians, and Oriental Peoples.

Edited by M. S. GABRIEL, M. D.
at 341 West 23rd St., New York

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ԽՈՐՀԻՐ ՄԵ.— Ամուսնութեան խնդիրը. Ասորիկայի հայ երիտասարդները հայ աղջիկ կը փնտռեն ու չեն գտներ. Ի՞նչ է ճարը.— Նորագոյն թերթերու մասին ի՞նչ կ'ասեն հիմերը.— Վիճակագիր Ամերիկայի Հայոց. Լե. Տորչեսթըր, Dorchester Mass.— Որքերուն օգտին աշխատելու եղանակ մը.— Մեծագոյն Նիւ Եորքը.— Այլևայլք.—

ԿՆՃՈՒՄԻՏ ԽՆԴԻՐ ՄԵ

ՄԵՐ ԱՂԳԱՅԻՆ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԵԱՆ
ԴԺՈՒԱՐՈՒԹԻՒՆՆԵՐՆ

Հայաստանի ջարդերը խորունկ խանգարումներ բերին մեր ընկերային պայմաններուն մէջ: Արուի և էգի յարաբերական թիւերը, վասակոցի և ուտոցի համեմատութիւնները, ամուսնութեանց, մահուանց, ծննդոց ցուցակները մեծապէս յեղաշրջուած են: Տնտեսական նոր պայմաններու մէջ պիտի կատարուի վերաշինութեան գործը, և հարկ է այդ պայմաններն ուսումնասիրել:

Թուրքիոյ և Հայոց վիճակագիրք չկենալով, ստիպուած ենք զԵրոպական երկրացն աչքի առջև բերել և անոնց լուսովը

առաջնորդ ու ի հաւանական թիւերը գրուելու մեր ժողովրդին վերաբերութեամբ:

Վիճակագիրք կը թուին նշանակել թէ Աւստրալիոյ, Ասիոյ և Ափրիկէի մէջ արուներու թիւը կ'անցնի էգերունը: Եւրոպական երկրաց մէջ էգե՛րը աւելի բազմաթիւ են: Ահաւասիկ թիւեր.— Հազար արուին դէմ կան 1064 էգ, բովանդակ Եւրոպայի մէջ.

Նորվեգիա	1091 էգ,	Սկովտիա	1072 էգ
Շուէտ	1065 »	Անգլիա	1064 »
Աւստրիա	1044 »	Գերմանիա	1039 »
Հունգարիա	1015 »	Ֆրանսա	1014 »
Իտալիա	989 »	Սերվիա	947 »
Յունաստան	929 »	Լի. Նահանգք	952 »

Եւրոպիոյ մէջ տարուէ տարի աւելի արու կը ծնի քան էգ, բայց և այնպէս էգերու թիւը աւելի է, վասն զի արուները աւելի վտանգաւոր գործերով կը զբաղին, իբրև զինուոր, նաւազ, հանքագործ, բեռնակիր, կառավար և այլն: Նոյնպէս արուք աւելի անձնատուր կը լինին մոլութեանց և կենսաճանաչ չափազանցութեանց:

Երկրի մը զինուորական ոյժը կը չափուի թուովն այն արուներու որք 18 էն 45 տարեկան լինելով կրնան զինուորիլ: 20 էն 37 տարեկան արուներու թիւը ի Գերմանիա 6,134,518 է. ի Միացեալ Նահանգս՝ 13,230,168, այսինքն բնակչաց ամբողջ թուոյն 100 ին 21.1 է: Այս հաշուով Ռուսիայի զինուորական ոյժը պէտք է լինի իբր 25 միլիոն զինուոր:

Ամուսնական վիճակին նայելով ժողովուրդ մը կը բաժնուի երեք դասերու. ամուրի, ամուսնացած, այրիացած: Ահաւասիկ Եւրոպական երկրաց համար եղած հաշիւը.

15 տարեկանէն վեր արուներու հար-
իւրին այսքանը

Ամուրի Ամուսնացած

Աւստրիա	43.8	51.3
Հունգարիա	31.5	63.7
Չեխոսլովակիա	45.2	48.0
Իտալիա	40.9	53.1
Ֆրանսիա	36.0	56.5
Մեծ Բրիտանիա	39.5	54.9
Գերմանիա	40.9	53.7
Պէլճիզա	46.0	47.5
Հոլանտա	42.2	52.0
Եւրոպա	42.6	54.9

Ա. Գրիգորեաններու թիւը հարիւրին 5
էն մինչեւ 7 է. կիներուն մէջ այրիներու
թիւը կրկնապատիկն է էրիկ մարդոց մէջ
եղածին:

Վերեւ յիշուած թիւերը * կրնանք
մերձեցնել մեր ժողովրդին: Բայց նախ
կ'ուզենք հարցնել թէ արդեօք քանի՞ հա-
զար Հայ ջարդերուն զոհ գնացին:

Այս մասին կարծիքները շատ տար-
բեր են: Ֆրանսայի գրողները երեք հար-
իւր հազար թիւը կը գործածեն: Հայ
գրողները տարբեր թիւեր կը նշանակեն
հարիւր հազարէն վեր: Ճշմարիտ թիւը
գտնել անկարելի է բայց ճշմարտամերձ
թուիք մը կազմել կրնանք:

Ֆրանսայի պաշտօնական Documents
Diplomatiques ին մէջ, 1895—96 ի խոշոր
ջարդերուն վիճակագիրը կայ, զեականա-
տանց խնամով պատրաստուած: Հոն կը
գտնենք հետեւեւ թիւերը:

Ջարդուածներու և բռնի ուրաղելոց
թիւը գաւառ առ գաւառ մինչև Փետր-
ուարի վերջ. 1896

Գաւառ	Երկուսն ալ ուրաղեալ	
Կարին	6,715	5,200
Աեքաստիա	3,225	1,600
Խարբերդ	11,584	12,500
Տիարպէքի	5,720	7,500
Քաղէշ	1,400	6,500
Վան	463	3,000
Քերթա	6,600	1,500
Ատանա	5	3,000
Էնկիւրի	350	150
Տրապիզոն	978	
	37,085	40,950

* Առած ենք Prof. Mayo-Smith ի
«Statistics and Sociology» գրքէն, հր-
1895 ին:

Այս թուերը, ինչպէս ասինք, չեն կըր-
նար ճիշդ նկատուիլ. բայց մերձաւոր
գաղափար մը կուտան: Տուեալ թուա-
կանէն յետոյ ևս եղան ինչ ինչ ջարդեր,
որոց համար լեցուն հաշուով գնելով
10,000, կ'ունենանք 47,085 ընդ ամենն:

Իբր 50,000 Հայ բռնի կամ առ ահի
ընդունած էին մահմետական կրօնը. ա-
նոնց մէկ մասը արդէն վերադարձած է
յեկեղեցին, և չէ կարելի գուշակել թէ
մնացելոց որքանը վեհապետ կորսուած
պիտի համարուին: Դա կարսումն ունի
պարագաներէն. եթէ մօտ ժամանակի
մէջ Թուրքիա ինչպէս վերստին Եւրոպական
եթէ ոչ վարչութեան գէթ պատկառելի
ազդեցութեան ներքեւ, ուրացեալներն
ամբողջովին կը վերահայտին:

Յետադարձի եղած գտնելուն թիւը
քաւական կարեւոր է և պէտք է բուն կո-
տորեւոց թուոյն վրայ բարդել: Վերաւոր-
ուած, վախցած, հիւանդացած լինելով
մեռնողները կրնան քսան և հինգ հազար
հաշուիլ: Չէյթուն և Արարիկ հազարք
մեռան տենդէ, թանջքէ և այլ ցաւերէ,
որք արդիւնք էին սննդի պակասութեան
կամ գէշ սննդի, օրոք սարսափածութեան
և խռնուածքնակելու:

Ամեն արտօնառով մահերը մէկտեղ
հաշուելով՝ կարելի է մեռեալներուն թիւը
գնել իրոք հարիւր հազար: Իսլամացած-
ներն ալ քառասուն հազար եթէ համա-
րինք, կ'ունենանք հարիւր քառասուն հա-
զարի կորուստ մը:

Ջարդուածներուն սեռը և հասակը
նկատել կարեւոր է: Թէև ջարդերու իւ-
րաքանչիւրին մանրամասն պատմութիւ-
նը չէ գրուած, (հարկ է գրել մինչ թարմ
են յիշողութիւնք)՝ Թայց սաչափը յայտնի
է թէ ամեն տեղ թշնամիք աւելի հոգ
տարած են 13 տարեկանէն վեր արուներն
սպաննել: Մանուկներուն և կանանց
ջարդը բաղդատարար թեթեւ եղած է,
և եղածն ալ ոչ դիտմամբ այլ արկածով
կամ անսովոր պարագայից բերմամբ:
Ուրեմն յիշուած հազար ջարդուածներուն
գուցէ քառասուն հազարը արտէ էին:
Եւ ահա այդ պարագայն է որ մեր մի-
րուստին ահաւորութիւնը կ'աւելցնէ:

Հիմա զատ զատ յիշենք այն ամեն
կարեւոր յեղաշրջումները որք տեղի ունե-
ցան մեր ազգին մէջ 1893 էն ի վեր:

ՆԱԽ, Հայոց թուոյն ամագիծ նոստրումը:

Livre Jaune-ը Ասիական թուրքիոյ Հայոց թիւը 1,475,011 կը գնէ ջարդէն առաջ:

ԵՐԿՐՈՐԴ, Ժողովրդի արտագրիչ մասին աւելի ահագին նուազումը բաղդատմամբ չարտագրիչ մասին: Արտագրիչը են արուները տասն և վեց կամ տասն և ութէն մինչև յիսուն կամ վաթսուն տարեկան: Իսկ մանուկները, ծերերը, պառանները, խեղճ, ապուշք, յիմարք, վոյրք, ցաւագորք և որ ի կարգին՝ սպառիչ միայն են:

ԵՐԿՐՈՐԴ, Այրենեայ թուոյն ահագին առումը: Եթէ Եւրոպական երկրաց մէջ տասն և հինգէն վեր եղողներու հարիւրին չորս կամ հինգը այրի է, Հայաստանի մէջ հարիւրին գուցէ տասն և հինգը:

ՉՈՐՐՈՐԴ, Ուրբերու թիւը սոսկալի համեմատութիւններու հասած է:

ՀԻՆԳԵՐՈՐԴ, մահացոյցը զգալապէս քարծրացած է, վասն զի մանուկներու համեմատութիւնը բարձր է և առողջապահական միջոցները աւելի քան երբէք զանց կ'առնուին: Եթէ հինգ տարի առաջ տարին հազարին երեսուն և հինգ կը մեռնէին, հիմա հաւանականօրէն այդ թիւը ելեր է վաթսուն կամ վաթսուն և հինգի:

ՎԵՑԵՐՈՐԴ, Պսակահաւաքը նոյնպէս քարծրացած է, ամուսնութեան ծախքերուն թեթեւացած լինելուն և այլ պայմանաց շնորհիւ: Աղգային լրագիրները շատ պատմեցին պսակմանց տարապայման յաճախութեանը մասին:

ԵՐԿՐՈՐԴ, Ծնողահամարը հաւանականօրէն աճած է 1897 ին, թէև այս մասին տեղեկութիւնք կը պակսին: Աւելի ստուգիւ պիտի աճի 1898—99 ին:

ՈՒԹԵՐՈՐԴ, Զինուորական թագուն ոյժը ինկած է: Հայք թէև գինուորութիւն չունին, բայց եթէ ունենային, պիտի տեսնուէր թէ նոքա, (Քռանսական «Գեղին Գրքին» հաշիւը, մէկ ու կէս միլիոնը, պակասաւոր համարելով և հաշուելով Փոքր Ասիոյ և Հայաստանի մէջ բնակեալ Հայոց թիւը 2 միլիոնի մօտ,) կրնային 1891 ին հանել իբր հարիւր յիսուն հազար զինուոր, հարիւրին 15 ը առնելով: Հիմա՝ հազիւ եօթանասուն կամ ութսուն հազար: Ուրեմն, եթէ բոլոր Հայերը մէկ նահանգի մէջ բնակէին և ունենային առանձին պետութիւն, կարող պիտի չլինէին, ուրիշ բաները հաւասար ենթադրելով, երրորդ

կարգի տէրութեան մը հետ յաջողապէս շափուիլ:

ՏՍՍՆԵՐՈՐԴ, Բարոյական կորսիւն և ինքնայարգութիւնը ևս, ջարդերու հետեւանօք, պակսած է Հայոց: մէջ՝ Թրքաց հետ անուշութեամբ, խոնարհութեամբ, իբրև նուաստ և հպատակ ցեղ ընդ տիրապետող ցեղի, վարուիլ ստիպուած են Հայք: Այս մասին եղած յետաշրջումը դարերով ետ կը տանի մերայինները:

Ուրեմն Օսմանեան Հայոց մէջ ընկերային տարբերու համեմատութիւնները խորին խանգարումներ կրած են: որքը, այրին, երախայն, դպրոցականը, ծերը, սպառիչ և տկար տարբերը աւելցած են ու բեռը վերցնողները նուազած: Միանգամայն՝ բնաւորութեան կորովը, նախաձեռնութեան ոգին, վստահութիւնը խրանձին վրայ և ընկերին վրայ՝ նուազած են:

Այս ամենուն դարմանը ինչպէս կրնայ լինիլ. դարման տանող կայ. և եղած դարմանը կը պատասխանէ՞ պէտքին:

Քանի մը գործնական միջոցներ կան ձեռք առնուելու այս անգամ յիշենք կարճ ի կարճոյ:

(1.) Հայաստանի մէջ երկուց սեռից թուական անհամեմատութիւնը կը պահանջէ որ կամ գաղթեալ երիտասարդները վերադառնան հայրենիք և կամ գրիորդները գան արտասահման և ամուսնանան հայ երիտասարդներուն հետ: Արդէն օրիորդները շատ էին Պարսերգու գաւառին մէջ, քանզի այն կողմերէն քանի մը հազար ամուրի երիտասարդ եկած էին յԱմերիկա: Ջարդէն ետև աղջկանց թիւը մեծապէս աւելցաւ: Նկատելով թուրքիոյ առ այժմ անստոյգ վիճակը՝ երիտասարդները չեն ուզեր վերադառնալ հայրենիք, ուրեմն ուրիշ ճար չկայ բայց միայն աղջիկներէն լաւագոյններն ընտրելով բերել ամուսնացնել:

(2.) Կազմակերպել արտասահմանի այլևայլ երկրաց մէջ հայկական յանձնախմբեր որք ինչպատա մեր որբերուն և այրիներուն դրամ հաւաքեն: Հարկաւ ողջ մնացած Հայերը հոգ կը տանին աղգին չքաւորաց և որբոց, բայց գործերը գէշ են, առևտուրները դանդաղ, դրամազուլիները նուազած, և արդէն նշաններ կան ցուցնող թէ ամենէն յօժարամիտներն անգամ յոգնած են, «տուր,

տուր» և չարունակ «տուր»ը մտիկ անելով: Հարկ է որ օտարէ օչնութիւն լինի և լինի կանոնաւոր և լեցուն:

Այս օգնութեանց լաւագոյն կարգին կը վերաբերին այն գործանոցները զորս օտարականք ունիք հաստատած են ի վան, Այնթապ, Ուրֆա և այլն, գործ հայթայթելու համար չքաւոր կանանց և այրեաց:

(3.) Որբերուն դատարարական թեան գործը արտասահմանի մէջ կատարել սըխալ ուղղութիւն է և կրնայ մեր պղտիկները ազգային լեզուէն, եկեղեցիէն և զգացումներէն օտարացնել: Չափահասներուն ախտայ պանդխտութեանն և գաղթման չարիքը մինչ կ'աղբայինք, ինչո՞ք քաջալերենք մեր անչափահասներուն, մեր աղգի ծաղիկներուն, հեռացումը հայրենեաց ծոցէն: Դրամ հաշելու համար հարկ է երբեմն հեռուն երթալ, բայց կրթութիւնը, մանաւանդ նախնականը, ծննդավայրին մէջ կրնայ առնուիլ և աւելի լաւ քան յօտար աշխարհ: Մինչև Կ. Պոլիս անգամ մեր սրբոց տեղափոխումը վտանգաւոր կը համարինք մենք:

ԿԱՐԵՒՈՐ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Ամերիկայի մեր այն բաժանորդները որք դեռ վճարած չեն 1898 տարւոյս համար, կը խնդրենք որ մինչև փետրուարի 10ը հասցնեն մեզի իրենց բաժանորդագրւներ:

Միայն այս կերպով կարելի է մեզ 1898 թուականին բաժանորդաց նոր ցանկը պատրաստել և չփոխութիւններէ ազատ մնալ:

ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

ՀԱՅՔԻ տարեկան բաժանորդագրին է երկու տոլար, կամ 10 Ֆրանք, (4 ռուպլի), ամեն երկրաց համար:

Հասցէ—

Editor of Haik,

341 West 23rd St. New York

ՄԱՆՐԻԿԱՆՈՒԹԻՒՆ

գրեց

ՏՕԲ. Ն. ՏԱՂԱՒԱՐԵԱՆ

Ազատի գիտութիւնս (Licencie' es Sciences)

Կ. Պոլիս, Տպ. Նշան Կ. Պէրպէրեան

1898

144 էջ. գին 10 դահեկան

ԼՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՆ

Հայ աղջիկ կը փնտռեն,

ու չեմ գտներ.

Ի՞նչ է ճԱՐԸ

Հոս երկարօրէն չպիտի պատմենք թէ ինչու հայ երիտասարդներէն անոնք որ ամերիկացի աղջիկ առեր են ի կնութիւն, չատերը դժգոհ եղած են, ումանք ամուսնալոյծ եղած են, ումանք բաժնուած և ումանք ալ դատաւարանի մէջ են դեռ: Ասոր մէկ պատճառն է հայու և ամերիկացիի բնաւորութեան, կենցաղավարութեան անհուն տարբերութիւնը:

Ուրիշ պատճառ մ'ալ այն է որ մեր երիտասարդներէն միայն քիչերը ամերիկացեոց ազնիւ, միջնակարգ, ունեւոր ընտանեաց հետ յարաբերութիւն կրնան ունենալ. անոնց ծանօթացող աղջիկներն ընդհանրապէս գործաւորուհիներ են, այսինքն անմշակ և յաճախ կնոջական համեստութենէ և փափկութենէ զրկուած դժբաղդներ, որք իրենց էրկներ ալ դժբաղդ անելու սահմանուած են:

Գործնական խնդրոյն գանք: Մեր երիտասարդներն, թէև ուզեն հայ աղջիկ, ուր պիտի գտնեն: Մեր մէջ հայ օրիորդը ամենէն հազուագիւտ ապրանքն է:

Անցեալ օր ամերիկուհի մը կ'ասէր մեզ թէ պէտք է և կարելի է Հայաստանէն բերել քանի մը հարիւր աղջիկ, այլևայլ քաղաքներէ ընտրելով ամենէն աղւորներն ու առողջներն: Բայց այս մասին գործնական միջոցներ ձեռք առնել առաջ կարծենք պէտք է հետեւեալը ի գործ դնել:

Նախ աւենք թէ մեր դիտումը չէ «Հայք»ի խմբագրութեան մէջ ամուսնական գործակալութիւն մը կազմաւորել, բայց մեզի գրուած նամակներէն, երիտասարդաց խնդիրներէն շարժեալ՝ կ'ուզենք դիւրութեան հնար մը գտնել: Եւ ահա մեր առաջարկութիւնը:

Թող անմիջապէս գրէ մեզի ամեն երիտասարդ որ հայ աղջիկ կ'ուզէ առնուլ, և, եթէ պատրաստ ունի, թող իւր լուսանկարն ալ յղէ (բայց այս անհրաժեշտ չէ): և որոշ ու մաքուր գրով պատասխանէ հետեւեալ կետերուն:

1. Տարիքդ ի՞նչ է.

2. Ծննդավայրդ. —

3. Արհեստ կամ գործի.
4. Նիւթական կարողութիւնը և վիճակը.
5. Կրթութեան վիճակը. կարգաւ գրել գիտե՞ս.
6. Քանի՞ տարի է ի վեր Ամերիկա ես.
7. Անգլիերէն ո՞րքան գիտես.
8. Դէմքով և հասակաւ ի՞նչպէս ես.
9. Ինչպիսի աղջիկ կ'ուզես:
10. Եթէ հարկ լինի, աղջկան մը ճամբու ծախքը Տաճկաստանէն հոս վճարելու պատրաստ ե՞ս, պայմանաւ որ եթէ չամուսնանաս, ստակդ ետ տրուի քեզի:

Այս աստը հարցումներուն պատասխանները ճշմարտութեամբ պէտք է գրել և հասցէով միասին յղել մեզի:

Նաև անհրաժեշտ է որ ամեն երիտաւարդ իւր պատասխանագրոյն հետ յղէ նաև կէս տոլար: Մենք չենք կրնար նամակներն կարգաւ, կարգի դնել և ի հարկին պատասխանել, առանց վճարումի:

Հայ օրիորդներն ալ պէտք է յղեն իրենց պատասխանագիրը վերինին նման, որոնք որ յարմար էրիկ մը կ'ուզեն. բայց կէս տոլար զրկելու պարտաւոր չեն:

Եթէ երիտասարդք և օրիորդք այս խնդրոյ անմիջական ուշադրութիւն տան, կրնանք քիչ ատենէն գիտնալ սա երեք բաները—

1. Թէ քանի՞ երիտասարդ ունինք ամուսնանալու պատրաստ:
2. Քանի՞ օրիորդ ունինք ամուսնական հասակի հասած, Ամերիկայի մէջ:
3. Քանի՞ օրիորդ պէտք է ջանալ ներածել Հայաստանէն՝ մեր երիտասարդներուն ամուսնական պահանջներուն գոհացում տալու համար:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

NIPPUR

EXPLORATIONS AND ADVENTURES ON THE EUPHRATES

BY

JOHN PUNNETT PETERS, PH. D.

Director of the Expedition

With Illustrations & Maps.

G. P. Putnam's Sons

New York & London

1897

Ա. Հատոր 375 էրես, Բ. Հատոր 420 էրես
Գին երկու հատորին 5 տոլար:

ՆՈՐԱԳՈՅՆ ԹԵՐԹԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Խմչ կ'ասեն հիւները

Համուէս Ամսօրեայ կ'ասէ.—

«Տիգրիս» շաբաթաթերթը... Հայերէն թերթ մըն է.— ահա ամբողջ առաւելութիւնը: Մանրալրերու և զանազան լրերու հաւաքածոյք մը: ... Անհամեմատ աւելի օգտակար է՝ որոշ ուղղութեամբ դէպ ի նպատակ մը ղիմող լրագրի մը հրատարակութիւնը: ... Փոխանակ նոր լրագրի եթէ այդ ընկերութիւնը «Հայք»ը զօրացնէր, առաւել մեծ կ'ըլլար ազդեցութիւնը: Հաւաքական տկար ոյժերն ալ շատ անգամ՝ առանձնական հանճարէ մ'աւելի օգուտ կ'ունենան: ... »:

«ՄՇԱԿ» կը գրէ.—

Մեզ կարևոր չեն նոր նոր անուններ և կամ մի քանի շաբաթով երեցող և նորից անհետացող օրգաններ, Լքցած ճոռմաբանութիւններով և ինքնագովակտն նկարագիրներով: Դրանք միայն երախաներին կարող են զուարճացնել: Իսկ Հայկական Կօլօնիսները (գաղթականութիւնները) երախաներ չեն: »

«Փարոս» ուրախ է որ թերթերու թիւը կ'աճի, և աւելի ուրախ պիտի լինէր եթէ որակն ալ բարձրացած լինէր:

«Իրաւունք» գոհ է, և անպայման է իւր գոհութիւն:

Այս դիտողութիւնները գաղափար մը կուտան թէ նոր թերթերուն և թէ հիններուն բնաւորութեանցը վրայ:

ՎԻՃԱԿԱԳԻՐ ՍՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ

ԼՆ. Տորչէսթըր Dorchester, Mass.

Տորչէսթըր՝ Պոսթոնի մաս և անոր հարաւային կողմը ընդարձակ, պատմական և զուարճալի աւան մ'է գինեհատական և հեռեւտպէս իրաւալ: Հոս գործարաններ չկենալով և առետրական կեդրոնէ ալ հեռի ըլլալով գործաւոր Հայեր չեն բնակիր և շատ չեն թուով: Այլ ունինք խումբ մը Հայեր որք ընտանեօք կը բնակին աստ և որոց ամենքը ունին իրենց առանձին գործը Պոսթոն քաղաքին մէջ: Ահաւասիկ մանրամասնութիւնը:

1. Թ. Ճ. Առաքելեան. կինը ամերիկացի. տպագրիչ:—2. Բ. Յ. Ազնիւ, կինը, զոքանչ և 4 զաւակ. լուսափորագիր:—3. Տ. Գ. Ազնիւ. կինը Նիւֆաունտլէնտցի

և 3 զաւակ. լուսափորագիր:—4. Գ. Կ. Բէմալեան. ֆւյր Վիկնը 6 զաւակ և մի հարս. լուսափորագիր:—5. Ս. Ե. Պարապետեան. Կիկնը Շուեռտայի և մի զաւակ. զերծակ:—6. Ա. Գ. Բէմալեան և Կիկնը. լուսափորագիր:—Այսպէս կը տեսնուի թէ հոս կան 6 ընտանիք Հայ. որոց 3ը իրենց կին ունին տարբեր ազգայնութիւններէ և այս խնդրոյն ցաւալի կողմը հոն է որ տարբեր ազգերէ կին ունեցողներուն զաւակներն Հայերէն չեն ֆսօսիր: Կը բաղկանան՝ զուտ Հայերը, 23 հոգիներէ որոց 11ը չափահաս են և 12ը մանկունք: Չափահասից 6ը արու՝ ընտանեաց գլուխներն են և մանկանց ալ 7ը արու են և Գ. Կ. Բ.

Որքերուն օգտին աշխատելու եղանակ մը:

Պոսթոն, 12 Յունուար.

Բանի որ տարեկան 25 տողարով կըրնայ Հայ որը մը պահուիլ ի Հայաստան, ու և է եօթը անձինք խմբակ մը կազմելով և իւրաքանչիւրը օրական սէնթ մը տալով տարին որը մը կրնան խնամել: Ալլաթըն—Մասս. Յունուար 9 ին խնամակալ խմբակ մը կազմուեցաւ առ այս նըպատակ, որոյ անդամք են—

1. Օրիորդ Ալիս Սթօն Պէթուէլ
2. Պր. Աւետիս Պ. Սելեան
3. » Գէորգ Պչազճեան
4. » Գառնիկ Էքսէրճեան
5. » Միքայէլ Մ. Պաղտասարեան
6. » Յակոբ Գալէմբէրեան
7. » Օրիորդ Սաթենիկ Յ. Պաղտասարեան

Խիստ շատ փափաքելի է որ նոյնաման խմբակներ, եօթը անդամներէ բաղկացեալ, կազմուին ամենուրեք Հայերէ և ուրիշներէ որք կը փափաքին օգնել որբերուն. և թէ իւրաքանչիւր խմբակ երբ կազմուի հաճի տեղեկացնել Մաշթոց Վարդապետի յիշատի—Մասս. որ և կը տեղեկացնէ Ազգային Պատրիարքարանին: Այս պաշտօնարը այս առաջին խմբակի անդամոց մին յղացած և առաջարկած էր ժամանակ մը առաջ որ կարելի կ'ընէ ու և է եօթը բարեկամներ անմիջապէս կազմակերպուելու և առաջին տարեվճարներն կանխաւ տալով որը մը խնամել սկսելու, առանց երբէք սպասելու ուրիշներուն. Իւրաքանչիւր եօթը կ'ընտրէ իւր Ատենապետն ու Գանձապետը որը դրամը տարուէ տարի կը վերկէ ուղղակի Կ. Պոլիս Ալլաթ. Պատրիարքին:

Մ. Մ. Պ.

ՄԵԾԱԳՈՅՆ ՆԻՒ ԵՈՐՔ ԲԱՂԱՔԸ

Առջի Նիւ Եորքի տարածութիւնն էր 39 քառակուսի մղոն, նորինը՝ 320 ք. մղ: Բնակչաց թիւն էր իբր 2 միլիոն, նորինն է՝ իբր 3,388 հազար. ուրեմն աշխարհիս մեծագոյն քաղաքն է՝ Լոնտոնէն յետոյ:

Մեծագոյն Նիւ Եորքի տարեկան ֆախքն է 60 էն 75 միլիոն տոլար. Լոնտոնինը՝ 65 միլիոն, Բարիզինը՝ 75 մ. Պէռլինինը՝ 21 մ.:

Մեծագոյն Նիւ Եորքի օրական ջրոյ մատակարարութիւնն է 330 միլիոն կալոն. Լոնտոնինը՝ 203 միլիոն Բարիզինը՝ 136 միլիոն Պէռլինինը՝ 30 միլիոն:

Մ. Նիւ Եորք 167 հազար շէնք կը պարուակէ, որոց 131 հազարը կը գործածուին իբրև բնակարան:

Մ. Ն. Եորքը ունի 1,200 մղոն փողոց. Լոնտոն՝ 1818, Բարիզ՝ 604, Պէռլին՝ 500:

ԵՅԼԵԻԵՅԼԻՔ

Ֆռանսայի մէջ հակահրէական յուզմունք և ցոյցեր սկսած են: Ի Բարիզ և քանի մը ուրիշ քաղաքներու մէջ Ֆռանսացիք Հրէից դէմ շարժումներ արած և խանութներուն վրայ յարձակումներ գործած են:

Ջրոյց կայ թէ Յունաստանի Գէորգ իշխանը Կրետէի կառավարիչ պիտի կարգուի:

Տէյլի Նիւզին կը հեռագրեն Օտէսայէն թէ Պարսկաստանի Շահին դահը կը սարսի, գաւառական վարչութիւններն կը քայքային և կը վախցուի թէ այդ պետութեան մասնական ընկղմումը տեղի պիտի ունենայ Խորասանի գրաւմամբ Ռուսիոյ կողմէն:

Ֆռանսական և գերմանական դեսպաններն ի Կ. Պոլիս նախանձոտ հսկողութիւն մը ի գործ կը դնեն գերմանական նոր դեսպանին ընթացքին վրայ: Սուլթանը իրատէ մը հանած կը զինի, ըստ գերման լրագրոյ մը, յայտարարելու թէ իւր պետական մարդիկ ակնաձգ զենեւ չեն այն խօսքերուն որոց նպատկն է խանգարել Թուրքիոյ գերագանց յարաբերութիւններն բարեկամ տէրութեանց հետ:

Ակնէն կը գրեն հոս մեր բարեկամներէն մէկուն. —

Միսիօնարաց բացած որբանոցին մէջ այժմ 72 որբ ունինք: 15 օրը 400 քաշ ալիւր կը սպառենք: Մէկ փիլաֆին կէս էօլպէ պուրջուր կը լեցնենք. ամեն օր հարսնիք ունինք կարծես: Որբերը գորգ մը գործեցին Միսիս Հէրիօի անուան ծուրեալ (որ Ակին օգնող անգլիացի դիւցազնուհին է), ուս վերտառութեամբ՝ The tender mother of the orphans of Eghin, Mrs. H. B. Harris.

Բալորը գլխագիր:

Պոսթոնէն կը գրեն մեզ. —

Այնթապի կեդրոնական թուրքիոյ Գոյէճի Ուսումնաւարտից Ընկերակցութիւնը իւր երկրորդ տարեկան գումարումն ունեցաւ ի Պոսթոն, Յունուար 15 ին, և զբաղեցաւ հետեւեալ խնդիրներով. —

(1) Թէ ինչպէս կրնայ Ընկ. նպաստել Ամերիկայի Հայոց մտաւարդ զարգացման: — Ընտանեկան հաստատութիւն:

(2) Թէ ինչպէս կրնայ իւր պարտականութիւն կատարել առ իւր սիրելի գոյէճն. — Ֆրիւմարթ աշակերտ մը պահելով հոն:

(3) Թէ ինչպէս կրնայ իւր ընկերաց օգնել համարարանական կրթութիւն առնելու: Գործաշիր ժողովոյ անդամք ընտրուեցան Տր. Եփեսուսեան՝ ատենապետ. Յ. Մուրատեան՝ փոխ-ատենապետ. Ա. Պ. Սեւեան՝ ատենադպիր. Տր. Ն. Մ. Գալուստեան՝ փոխ-ատենադպիր:

Ուստըրէ կը գրէ մեզ Տիար Դ. Ա. —

Տեղւոյս նորակազմ լսարանի Բ. նիստը տեղի ունեցաւ և որբերու մասին խօսեցան ատենաբանները: Ազդեցիկ խօսքերէ յետոյ՝ անմիջապէս հանգանակութեան ելաւ 200 տոլարի մօտ դրամ հանգանակուեցաւ որ պիտի դրկուի խարբերդի և ուրիշ որբանոցներուն: Յանձնախումբ մը ընտրուեցաւ Արժանապատիւ Ահաթոյ Վարդապետէ, Պատ. Բարակեանէ, Պատ. Պէննէեանէ, Ուսումն. խորհրդոյ ատենապետ Պ. Տօմաճեանէ և ատենադպիր Պ. Թըֆէնքճեանէ որ տուները շրջելով պիտի հանգանակէ: Կը յուսացուի որ մինչև 400 տղար գումարուի:

Ուրիշ քաղաքներ ալ մեք օրինակին թող հետեւին:

Յովհաննէս Սիւլիեան անունով 26 տարեկան երիտասարդ մէ, թուէս 2 ամիս առաջ Մարտիկայէն նիւ Եորք գալուն նամակ անինք, անկէ վերջ մինչև այսօր ուրիշ ո և է լուր մը չառինք: ով որ գիրքէ նորա ուր կամ ինչ լինելու թող հաճի ի սէր մարդկութեան գիտցնել հետեւալ հասցէին —

Ճ. Տօնապետ Առաքելեան

29 Monroe St.

Newburyport Mass.

ԲԱՅՅԻԻ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Շարժանակաւ է բաժանորդագրութիւն —

1. «Սամուէլ» Հ. Ա. Բ. և Գ.

2. «Դաւիթ—բէկ» Հ. Ա. Բ. և Գ. վերջաբանով:

3. «Կայծեր» Հ. Բ. լիակատար:

Երեք գրքերի բաժանորդագրին միատին 12 շիլինգ. իսկ լոյս տեսնելուց յետոյ մի անգ. ոսկի:

«Սամուէլը» արդէն մամուլի տակն է և լոյս կը տեսնի Յունվար ամսին:

ԲայՅիի վաճառելի երկերն են՝

1. «Խենթ և Ջալալէդդին» մի գրքի մէջ ամփոփուած գինն է 6 շիլինգ

2. «Կայծեր» Հ. Բ. (սակաւաթիւ) Հ. Բ. 4 1/2 —

3. «Վէպիկներ և Պատկերներ» Հ. Ա. և Բ. — 9

4. «Խամսայի Մեղիքութիւնները» 4 1/2 —

5. «Ջահրումար» վէպ 4 1/2 —

6. «Կայծի կտակը» 2 1/2 —

7. «Խաչագողի Յիշատակարանը» չորս մասերը մի գրքի մէջ 5 —

8. «Մինն այսպէս և միւսն այնպէս» պատկերազարդ վէպ 2 —

9. «Տաճկահայք» 1 —

Բաժանորդագրութեան և վաճառելի գրքերի համար դիմել՝

Mme. Raffi

270 Uxbridge Road

Shepherd's Bush

London W.

ՀԱՅԳԻ

ՊԱՏՈՒԱԿԱԼ ԿՈՐԾԱԿԱԼՆԵՐԷՆ

Յատկապէս կը խնդրենք որ իրենց
ջանքերուն արդեանց մասին խմբագրու-
թեանս գրեն:

* *

Մ. ՄԱՄՈՒՐԻԱՆԻ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

1. Համառոտ Պատմութիւն Հայոց, մին-
չև մեր օրերն: 261 էջ. գինն է 5 դահե-
կան ու կէս:

2. Առոմիո Տնտեսութիւն. (Տան բարո-
յական կազմաւորութիւնն. — Պիտոյքը. —
Առողջապահիկ միջոցները:) 295 էջ. —
Գինն է 6 դահեկան:

3. Իրաքանութիւն կամ տղոց աչքն ու
ականջը կրթելու եղանակ. 191 էջ գինն
է 5 դահեկան:

4. Առաջին Ընթերցարան. 2 դահ.

5. Երկրորդ Ընթերցարան. 157 էջ
գինն է 3 դահեկան:

6. Գիտելիք ու Պարտիք Տղոց. — 224
էջ. 5 դահեկան ու կէս:

Վերոյիշեալ գրքերը որ ամեն հայ
ընտանիքի համար օգտակար են, և շատ
գիւրազին, կրնան ապսպրուիլ հրատա-
րակէն՝ հետեւեալ հասցէով. —

Mr. M. Mamourian

Smyrna, Turkey

* *

ԲԻԻՐԱԿՆ

Այս հանգէսը որ 15 տարիէ ի վեր կը
հրատարակուէր ի Կ. Պոլիս Հ. Ս. Խ. Իւ-
թիւնեանի խմբագրութեամբ, սկսած է
նոր շրջան մը տնօրէնութեամբ Սմբատ
Դաւթեանի և խմբագրութեամբ Գալուստ
Անդրէասեանի: Կը հրատարակուի շա-
բաթն անգամ մը: Օտար երկիրներու
համար տարեկանն է 12 Ֆրանք. (2½
տոլար):

Նիւ Եորքի Հայերը ընդհանուր Ժո-
ղով մ'անելով եկեղեցական ծախուց հա-
մար դրամ հաւաքեցին. գումարն եղաւ
իբր չորս հարիւր յիսուն տոլար:

Հայոց Բարեգ. Ընկերութեան օգտին
լինելու Ժողովը որոշուած է՝ փետրուարի
առաջին կիսուն մէջ հրաւիրել:

Ը. Մ. ԳԵՐԵԿԻՕ.ՉԵԼՆ

Տունը կը վաճառէ օսմանեան ու-
կով փոխանակազիր Կ. Պօլսոյ վրայ: Բա-
ղաքէն հեռու գտնուողը կարող են դրա-
մը շրկելով փոխ-գիրը ստանալ:

Փոխ-գիր կը արուի մեծ թէ փոք

գումարներու համար, ի տես վճարելի:

Հասցէ—

A. & M. KARAGHEUSIAN,

71 Wall Street,

New York, N. Y.

ԹԵՆԿ ԷՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Հին ձեռագիրներ (manuscripts) և
դրամներ կը գնենք, ինչպէս և ուրիշ
պատուական հնութիւններ: Մեր վաճա-
ռատունն է ի թիւ 390 5th Ave., Նիւ Եորք.

ՏԻԳՐԱՆ ՔԷԼԷԿԵԱՆ:

Ed. LEGOLL

ԴԵՂԱԳՈՐԾ

286, 7րդ Էվինիու

Նիւ Լորք

26դ և 27դ. Փողոցներուն միջև

Դեղագրեր կը շինուին խնամով

* *

JOHN C. MORRISON

Յ. Ս. ՄՕՐԻՍՏԸՆԻ

ԴԵՂԱՐԱՆԸ

Կը գտնուի ի թիւ 262 Ութերորդ
Էվինիւ, Մեծ Օքսթրայի հանգէպ 23 և 24
րդ փողոցներուն միջև:

Վստահելի դեղեր, բանաւոր գներով
կը ծախենք:

* *

Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն

Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ